ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ООО "РАДОНСТРОЙ"
«ԳՈՌԷՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ

ՀՀ , ք. ԵՐԵՎԱՆԻ
« ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ »-ի
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Երևան – 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ 4

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 7

3.1. Գործունեության անվանումը, նպատակը և ձեռնարկողը 7

3.2. «ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ գործունեության հակիրճ նկարագրություն 9

3.3. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ 11

a. Վարչական մասնաշենքի վերակառուցում 11

b. *Պոմպակայանի վերակառուցում* 11

c. *Կաթսայատան կառուցում* 12

d. *Տրանսֆորմատային ենթակայանի կառուցում* 12

e. *Դեզբարիերի կառուցում* 13

f. *Լաբորատոր արտադրական մասնաշենքի վերակառուցում* 13

g. *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* 14

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 15

4.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 15

4.2 Կլիմայական պայմանները 19

4.3. Օդային ավազան 23

4.4. Ջրային ռեսուրսներ 23

4.5. Հողածածկ 24

4.6. Կենսաբազմազանություն 25

4.7. Սոցիալ-տնտեսական պայմանները 25

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 28

5.1. Ռիսկերի գնահատում 28

5.1.1 Օդի աղտոտում 28

5.2. Հիմնական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները 31

5.2.1. Մթնոլորտային օդի պահպանություն 31

5.2.3 *Հողային ռեսուրսներ* 32

5.2.8 *Աշխատանքի անվտանգություն և առողջություն* 34

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1 38

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2 43

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲ ընկերությունը մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի Մասիսի խճուղի 107/2 հասցեում իր լաբորատոր վարչական շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ) պետական ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է (վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. մայիսի 5-ի №630-Ն որոշմամբ):

«ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ բաղկացած է երեք ստորաբաժանումներից՝

- Կենդանիների առողջության ստորաբաժանում /ք. Երևան, Նուբարաշեն/,
- Բույսերի առողջության ստորաբաժանում /Արմավիրի մարզ, գ. Մերձավան/
- Անասնաբուծության ստորաբաժանում /Կոտայքի մարզ, գ. Նոր Գյուղ/

Այս ստորաբաժանումներն ունեն առանձին բաժիններ և լաբորատորիաներ: Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է՝ իր մասնագիտացմանը համապատասխան գիտական, գիտատեխնիկական հետազոտություններ, ինչպես նաև մեթոդական, փորձագիտական և գիտակրթական աշխատանքներ կազմակերպելը և իրականացնելը:

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի լաբորատոր վարչական շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման սույն աշխատանքային նախագծի մշակումը կատարվել է «ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ>> ՍՊԸ-ի կողմից, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ գյուղատնտեսության նախարարության եզրակացությունը, <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ ընկերության կողմից 07.08.2018թ. տրված տեխնիկական եզրակացությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.28072017-01-0323 վկայականը, որում ամրագրված 3.81411 հա հողամասի սահմաններում մշակվել է սույն աշխատանքային նախագիծը:

Համաձայն աշխատանքային նախագծի նախատեսվում է վերակառուցել և վերահատակագծել տարածքում առկա վարչական և լոբորոտոր մասնաշենքերը և դրանք միացնող անցումը: Տարածքում նախատեսվում է նաև կառուցել նոր կաթսայատուն, տրանսֆորմատորային ենթակայան, դիզելային էլեկտրակայան, երկու ջրամբարներ, դիզ.վառելիքի ստորգետնյա բաքեր:

Տարածքը, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գտնվում է Շենգավիթ վարչական շրջան, Մասիսի խճուղի 107/2 հասցեում:

Նախագծվող հողամասով, կամ կից տարածով անցնում են գործող, ինժեներական ենթակառուցվածքներ և հաղորդակցուղիներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 16-ի 4-րդ մասի պահանջներով և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն կազմվել է շրջակա մաջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցութունների վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Նախնական գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների շրջանակների բացահայտումը և կանխատեսումը և այդ ազդեցությունների կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախնական նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

«Սննդամթերքի անվտանգության ռիսկերի վերլուծության եվ գնահատման գիտական կենտրոն» ՓԲԸ լաբորատոր վարչական շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման "հայեցակարգերի" պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ.

Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2017թ.) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3.1. Գործունեության անվանումը, նպատակը և ձեռնարկողը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ <<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի վերլուծության և գնահատման գիտական կենտրոն>> ՓԲԸ լաբորոտոր և օժանդակ մասնաշենքերի վերակառուցում:

<<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի վերլուծության և գնահատման գիտական կենտրոն>> ՓԲԸ լաբորոտոր և օժանդակ մասնաշենքերի վերակառուցման նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել Անշարժ գույքի նկատմամբ սեփական իրավունքի պետական գրանցման N հ.28072017-01-0323 վկայականը և Երևանի քաղաքապետարանի կողմից նախագծման համար 26.09.2018թ.տրված N 01/18-07/2-65 287-684 նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք):

Գործունեությունն իրականացվելու է բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գոտում՝ անշարժ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված հողատարածքում: Հողամասը զբաղեցնում է 3.81411 հա մակերես: Այն ներկայումս <<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի վերլուծության և գնահատման գիտական կենտրոն>> ՓԲԸ մասնաշենքերով կառուցապատված տարածք է: Տարածքում առկա է քանդման ենթակա՝ 267 ք.մ մակերեսով միահարկ շինություն:


Գլխավոր հատակագիծ: Մ 1 : 500
Շենքերի և շինությունների մեկնություն
N | Անվանում | Մակերես, քառ.մ
1 | Վարչական մասնաշենք /վերակառուցվող/ | 789.8
2 | Լաբորատոր մասնաշենք /վերակառուցվող | 2625.9
3 | Անցումային սրահ /վերակառուցվող | 109.8
4 | Պոմպակայան /վերակառուցվող/ | 71.2
5 | Ստորգետնյա ջրամբարներ՝ 2 հատ /վերակառ./ | 2x72.0
6 | Գաթասայատուն /նախագծվող/ | 87.2
7 | Ենթակայան /նախագծվող/ | 63.1
8 | Դիզելային էլ.կայան /նախագծվող/ | 27.5
9 | Դիզբարիեր /նախագծվող/ | 64.0
10 | Վառելիքի ստորգետնյա բաքեր /նախագծվող/ | 67.0
11 | Ծխնելույզ /նախագծվող/ | 2.3
12 | Կենցաղային կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան /նախագծվող/ | 28.0
Նախատեսվող կանաչապատում 13890 քառ.մ
Ծառատնկում - 120 ծառ
Գոյություն ունեցող քարե շինություն
Կամ.սալտակ
Կամ.սալտակ
Բետոն
0.000 = 1076.70
0.000 = 1072.85
0.000 = 1076.70
60000
12000
60000
60000
60000
15800
12400
6400
006
02022018-ПЗУ.ГЧ
Федеральное государственное бюджетное учреждение
"Федеральный центр охраны здоровья животных" (ВНИИЗЖ)
Реконструкция ЗАО "Научный центр оценки и анализа рисков безопасности пищевых продуктов",
Республика Армения , г. Ереван.
Схема планировочной организации земельного участка
Стадия | Лист | Листов
П | 2 | 5
Генплан с благоустройством
ООО "РАДОНСТРОЙ"
г. Москва
ООО "ГИДЭПИНВЕСТ"
г. Ереван
Изм. | Кол.уч. | Лист. | N Док. | Подпись | Дата
Проектировал Ш.Казарян
Проверил Г.Шахназарян
ГАП К.Бабаджанян
ГИП В.Цибизов

3.2. «ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ գործունեության հակիրճ նկարագրություն

Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնն ապահովված է բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ հոսանքի, ջրամատակարարման, կոյուղու գծերով: Նախագծվող հողամասով, կամ կից տարածքներով անցնում են գործող, ինժեներական ենթակառուցվածքներ և հաղորդակցուղիներ: կենտրոնի դիմային մասում արկա են մի քանի տասնյակ ծառեր, որոնք տնկվել և խնամվում են կենտրոնի կողմից և շինարարության ընթացքում որևէ ազդեցության, կամ հատման չեն ենթարկվի:

Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը իր մասնագիտացմանը համապատասխան գիտական, գիտատեխնիկական հետազոտություններ, ինչպես նաև մեթոդական, փորձագիտական և գիտակրթական աշխատանքներ կազմակերպելն ու իրականացնելն է: Կազմակերպությունն իր առջև դրված խնդիրները լուծելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում է գիտական և գիտատեխնիկական գործունեություն:

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

ա) անասնաբուծության և անասնաբուժության ոլորտներում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը.

բ) գյուղատնտեսական կենդանիների նոր ցեղերի ստացման ու բուծման հետ կապված աշխատանքների իրականացումը և պայմանագրային հիմունքներով՝ դրանց հետ կապված հետազոտական ծառայությունների մատուցումը.

գ) գյուղատնտեսական կենդանիների և թռչունների հիվանդությունների կանխարգելիչ ու բուժիչ միջոցների հետազոտումը և լաբորատոր հետազոտությունների կազմակերպումը.

դ) անասնաբուժության ոլորտում օգտագործվող կենսապատվաստուկների, ախտորոշիչ միջոցների և շիճուկների փորձաքննության անցկացումը.

ե) գյուղատնտեսության բնագավառի գիտական կադրերի պատրաստումը.

զ) վարակիչ հիվանդություններով կամ նյութափոխանակման խախտումների և օրգանիզմի գործունեության այլ շեղումների հետ կապված հիվանդություններով հիվանդ կենդանիների, ինչպես նաև կենդանիների զանգվածային հիվանդությունների պատճառների հայտնաբերումը.

է) բույսերի պաշտպանության բնագավառում ավանդական տեխնոլոգիաների կատարելագործումը, նոր տեխնոլոգիաների մշակումը.

ը) բույսերի պաշտպանության ոլորտում հետազոտությունների իրականացումը.

թ) գյուղատնտեսական մշակաբույսերի, բազմամյա տնկարկների վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի համակարգի մշակումն ու ներդրումը.

ժ) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի ոլորտների ռիսկերի վերլուծությունը և գիտական հիմնավորումը:

«ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ բաղկացած է տարբեր ստորաբաժանումներից, բաժիններից և լաբորատորիաներից, որոնք տեղաբաշխված են Երևան քաղաքում և տարբեր մարզերում և ներառում են՝

ա. Կենդանիների առողջության ստորաբաժանում /ք. Երևան, Նուբարաշեն/

- Մոլեկուլյար կենսաբանական լաբորատորիա
- Շճաբանական լաբորատորիա
- Բջջային կուլտուրաների աճեցման լաբորատորիա
- Վիրուսաբանության լաբորատորիա
- Մանրէաբանական լաբորատորիա
- Մակաբուծաբանության լաբորատորիա
- Կենսապատրաստուկների որակի վերահսկողության լաբորատորիա

բ. Բույսերի առողջության ստորաբաժանում /Արմավիրի մարզ, գ. Մերձավան/

- Ֆիտոպաթոլոգիայի և էնտոմոլոգիայի բաժին
- Հերբոլոգիայի բաժին
- Վնասակար օրգանիզմների ռիսկերի գնահատման և վերլուծության բաժին
- Բույսերի վարակիչ կարանտինային հիվանդությունների ուսումնասիրման բաժին

գ. Անասնաբուծության ստորաբաժանում /Կոտայքի մարզ, գ. Նոր Գյուղ/

- Տավարաբուծության բաժին
- Ոչխարաբուծության բաժին
- Խոզաբուծության բաժին
- Թռչնաբուծության բաժին
- Կերարտադրության բաժին

<<Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին>. Հայ աստանիՀանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-6-րդ մասերի համաձայն՝ մարդու կյանքի և առողջության,կենդանիների առողջության և բարեկեցության, բույսերի առողջության պաշտպանության նպատակովսննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում պետականվերահսկողությունն իրականացվում է ռիսկի վերլուծության հիման վրա: Ռիսկի վերլուծությունը, որը ներառում է ռիսկի գնահատումը:
Ռիսկի գնահատումն իրականացնում է գիտական կազմակերպության (կենտրոնի) կողմից, իսկ ռիսկի կառավարումը՝ ռիսկ կառավարող լիազոր մարմնի կողմից /ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգուանվտանգության տեսչական մարմինը/:

3.3. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

a. Վարչական մասնաշենքի վերակառուցում

«ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ գործող վարչական մասնաշենքն իրենից ներկայացնում է եռահարկ շինություն /ցոկոլային հարկ, առաջին հարկ, երկրորդ հարկ/, նախագծում 60,0մx12,0մ առանցքային չափերով, 3.3մ հարկերի բարձրությամբ՝ կառուցված ԻԻՍ-04 շինությունների սերիայում:

Այս աշխատանքային նախագծով նախատեսում է բարելավել գործող վարչական մասնաշենքի սեյսմակայունությունը, վերակառուցել և վերանախագծել նախագծման հանձնարարականի և առաջադրանքի համաձայն:

Վերակառուցման շինարարական աշխատանքներով նախատեսվում է՝

- սյուների տրամատների մեծացում՝ մինչև 400x400մմ,
- հիմնային երկաթբետոնե գերաններ կառուցում, որոնք երկայնական և լայնական ուղղություններով կապում են կառուցված սյուների կետային հիմքերի սյունկալները /հիդրոմեկուսացմամբ/,
- երկայնական և լայնական ուղղություններով ե/բ դիաֆրագմաների կառուցում,
- ծածկույթների ամրացում ամրացված բետոնե շերտով,
- ե/բ պատի պանելների և քարակառույց պատերի ջերմացում ներքին կողմից 50 մմ հաստությամբ բազալտե բամբակի կոշտ սալաքարերով՝նախապես պանելների և պատերի ներքին կողմից ծեփային հիդրոմեկուսացմամբ և գիպսաստվարաթղթե թերթերով ջերմամեկուսիչ երեսվածքով,
- նոր տափակ տանիքի կառուցում՝ կազմակերպած ներքին ջրհոսքով,
- խարամաբետոնե բլոկերից 200մմ և 100մմ հաստությամբ միջնապատեր:

b. *Պոմպակայանի վերակառուցում*

Գոյություն ունեցող պոմպակայանն իրենից ներկայացնում է նախագծով 21,28մx6,0մ առանցքային չափերով, մեկհարկանի քարե շինություն: Շինության մի մասը՝ 11,96մx6.0մ չափերով 1-3 առանցքների մեջ մինչև ծածկի ներքևի հատվածն ունի 5,6մ բարձրություն: Մնացած մասը՝ 9,32մx6.0մ չափերով 3-4 առանցքների մեջ մինչև ծածկի ներքևի 0,000 հատվածն ունի 3,52մ բարձրություն և խորացված է գետնի մեջ 2,55մ խորությամբ: Ծածկը՝ լայնակի ուղղությամբ 6,0մx3.0մ չափերով ե/բ շերտավոր սալիկներ է: Տանիքը գլանաձև է քիչ թեքությամբ, ջրհոսքը արտաքին է, չկազմակերպած:

Կրող 400մմ հաստությամբ քարե պատերի ամրացման նպատակով նախատեսվում է 50մմ հաստությամբ ե/բ շապիկների կառուցում՝ մետաղյա ցանցի բետոնե հարթեցմամբ:

Նախատեսվում է նաև արտաքին ջրհոսքով նոր տանիքի կառուցում:

c. *Կաթսայատան կառուցում*

Կառուցվող կաթսայատունը նախագծված է որպես 12,4մx6,4մ առանցքային չափերով, մեկհարկանի շինություն: Շինության բարձրությունը 0,000մ ցուցանիշից մինչև ծածկի ներքևի մասը կազմում է 3,6մ:

Կաթսայատան շենքի կրող կոնստրուկցիաներն են մոնոլիտային ե/բ կարկասը՝ մոնոլիտային սալիկային ծածկույթով:

Սահմանազատող կառույցներն են՝ ճիշտ ձևի քարերից շարվածքը որպես ե/բ կարկասի պինդ լրացում:

Տանիքը գլանաձև, հարթ է, արտաքին ջրհոսքով, ազատ ջրնետմամբ:

Միջնապատերը խարամաբետոնային են՝ 100 մմ հաստությամբ:

Կաթսայատունը կառուցվելու է հիմնական շինության դիմացի հարթակի վրա, որտեղ չկա բերրի հողի շերտ:

Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել երեք հատ ջրաջեռուցիչ կաթսաներ՝ 870 կՎտ, 1400կՎտ և 1600կՎտ դրվածքային հզորությամբ: Կաթսաները կհամալրվեն ժամանակակից գազային այրկչներով:

Կաթսայատանը կտեղադրվեն շրջանառու և մղող պոմպեր, ընդլայնող բաքեր և բաշխիչ կոլեկտորներ:

Բոլոր երեք կաթսաների ծխագազերը միանում են և արտանետվում մեկ 850 մմ տրամագծով ծխնելույզի միջոցով: Ծխնելույզի բարձրությունը կաթսայատան տանիքից կազմելու է 3.5 մ:

Կաթսայատանը նախատեսված է եռապատիկ օդափոխություն 400 մմ դեֆլեկտորի միջոցով:

d. *Տրանսֆորմատային ենթակայանի կառուցում*

Նախագծով տրանսֆորմատային ենթակայանը նախագծված է որպես 15,8մx 5,6մ առանցքային չափերով մեկհարկանի շինություն:

Շինության բարձրությունը 0,000մ ցուցանիշից մինչև ծածկի ներքևի մաս կազմում է 4.2մ:

Ենթակայանի շենքի կրող կոնստրուկցիաներն են՝ մոնոլիտային ե/բ կարկասը մոնոլիտային սալիկային ծածկույթով:

Սահմանազատող կառույցներն են՝ ճիշտ ձևի քարերից շարվածքը որպես ե/բ կարկասի պինդ լրացում:

Տանիքը գլանաձև հարթ է, արտաքին ջրհոսքով: Միջնապատերը խարամաբետոնային են 200 մմ հաստությամբ:

Ենթակայանը կառուցվելու է արտադրական մասնաշենքի կողքին որտեղ չկա բերրի հողի շերտ:

e. *Դեզբարիերի կառուցում*

Նախագծով դեզբարիերը նախագծված է որպես 11,58մx6,0մ առանցքային չափերով մեկհարկանի շինություն: Շինության բարձրությունը 0,000մ ցուցանիշից մինչև ծածկի ներքևի մասը կազմում 4.8մ է: Կրող կոնստրուկցիաներն են՝ մետաղյա սյուները:

Սահմանազատող կառույցներն են՝ «Սենդվիչ” թեթև պանելներից պատերը և տանիքը:

Տանիքը գլանաձև հարթ է, արտաքին ջրհոսքով: Պատուհանները ապակեփաթեթներով մետաղապլաստե են:

Բաղնիքի հատակը և ծածկույթը ցեմենտապատ են ծածկույթի մետաղապատմամբ:

f. *Լաբորատոր արտադրական մասնաշենքի վերակառուցում*

Այս նախագիծը նախատեսում է բարելավել գործող լաբորատոր արտադրական մասնաշենքի սեյսմակայունությունը, վերակառուցել և վերանախագծել նախագծման հանձնարարականի համաձայն:

Գոյություն ունեցող լաբորատոր արտադրական մասնաշենքն իրենից ներկայացնում է քառահարկ շինություն /ցոկոլային հարկ -4.800 ցուց., առաջին հարկ 0.000 ցուց./, երկրորդ հարկ 4.800 ցուց. և երրորդ հարկ 9.600 ցուց/:

Նախագծով 84,1մx 30,0մ առանցքային չափերով, հարկերի 4,8մ բարձրությամբ է, կառուցված է ԻԻՍ-20 սերիայի կոնստրուկցիաներում;

Կրող կոնստրուկցիաներ են՝

- ե/բ հավաքովի սյուներ 600մմx400մմ կտրվածքով, ցոկոլային և առաջին հարկերում
- ե/բ հավաքովի սյուներ 400մմx400մմ կտրվածքով, երկրորդ և երրորդ հարկերում,
- ե/բ հավաքովի սողնակներ լայնակի ուղղությամբ,
- ե/բ հավաքովի և մոնոլիտային կապող պանելներ երկայնակի ուղղությամբ,
- ծածկույթներ՝ե/բ հավաքովի շերտավոր սալիկներ 200մմ հաստությամբ:

Սահմանազատող կոնստրուկցիաներ՝

- ե/բ պատի պանելներ 250մմ հաստությամբ՝ երեսպատված վարդագույն տուֆի սալիկներով
- 300մմ հաստությամբ քարակառույց անցումային սրահի հարման և ցոկոլային հարկում արտաքին դռների տեղադրման մասերում,
- ժապավենային ապակեպատում,

- տանիքը տափակ է գլանաձև, /հետագայում մասնաշենքի կեսի վրա կառուցվել է գլորման տանիք /,

- հիմնային երկաթբետոնե գերանների կառուցում, որոնք երկայնական և լայնական ուղղություններով կապում են կառուցված սյուների կետային հիմքերի սյունկալները /հիդրոմեկուսացմամբ/,

- երկայնական և լայնական ուղղություններով ե/բ դիաֆրագմաների կառուցում,

- ծածկույթների ամրացում արմիրացված բետոնե շերտով,

- նոր տափակ տանիքի կառուցում՝ կազմակերպած ներքին ջրհոսքով,

- խարամաբետոնե բլոկերից 200մմ և 100մմ հաստությամբ միջնապատեր:

Ելնելով նոր տեխնոլոգիական լուծումներից՝ նախատեսվում է ամբողջական վերանախագծում:

Ցոկոլային հարկում կառուցվում են նոր արտաքին դռներ և մոնտաժային դռնատեղ, որի հետևանքով ապամոնտաժվում են վեց ե/բ պատի պանելներ /երեքը «1–16» ճակատում և երեքը «16-1» ճակատում/ և դրանց փոխարեն կառուցվում է քարակառույց:

Ճակատային լուծումներ

Ելնելով երրորդ սեյսմիկ գոտու պայմաններում շենքի վիճակի բարելավման անհրաժեշտությունից՝ որոշվեց նվազեցնել շենքի զանգվածը՝ թեթևացնելով սահմանազատող կոնստրուկցիաները:

Դրա համար նախագծով նախատեսված է ապամոնտաժել 1.200 ցուց. բարձր հավաքովի պատի ե/բ պանելները և փոխարինել դրանք “Սենդվիչ” տեսակի սպիտակ գույնի թեթև պատի պանելներով, որը նաև նոր տեսք կհաղորդի շենքին:

Վերակառուցման աշխատանքների տևողությունը

Ներկայացվող աշխատանքների տևողությունը ընդունվում է ըստ շինարարության կապալառուի մրցույթում ներկայացված առաջարկների: Ըստ նախնական գնահատման վերակառուցման աշխատանքները կարող են տևել 2 – 3 տարի:

g. *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Երևան քաղաքի «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ լաբորատոր վարչական շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ըստ նախնական հաշվարկների ջրցանի համար ջրի օրական ծախսը կկազմի՝ 0.3մ^3, իսկ տարեկան՝ 46.2մ^3, իսկ խմելու և կենցաղային նպատակների 90.4 մ^3/տարի, միջին օրեկան 0.587մ^3:

Կենտրոնի տարածքում առկա են և շահագործվում են ջրագիծ, կոյուղի, որոնք միացված են Վեոլիա ջուր ընկերության քաղաքային ցանցին: Էլեկտրամատակարարումը իրականացվում է գործող գծի և ենթակայանի միջոցով:

Շինարարական աշխատանքներից բուսահող չի առաջանում, քանի որ տարածքը ամբողջովին կառուցապատված է:

«ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ շահագործման փուլում լաբորատոր գործընթացների ընթացքում օգտագործվում են կենսապատվաստուկներ, հերբիցիդներ, պեստիցիդներ, ախտորոշիչ միջոցներ և շիճուկների, վնասազերծող և աղտահանող լուծույթներ, ներկեր, լաբորատոր սարքեր այլ նյութեր, որոնց ցանկը և քանակները կներկայացվեն համապատասխան հրահանգներում և ռեգլամենտներում:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

<<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՓԲԸ գտնվում է Երևան քաղաքի հարավային ծայրամասում, Շենգավիթ վարչական շրջանի արդյունաբերական գոտում: Կենտրոնի շրջակայքում, սկսած 120 մետր հետավորությունից, գտնվում են Խարբերդի այգեգործական ընկերության առանձին շինություններ և տներ:

Երևան քաղաքի մոտակա բնակելի՝ “Էրեբունի” և «Նորագավիթ» թաղամասերը գտնվում են կենտրոնից մոտ 1200-2000մ հեռավորությունների վրա:

Կենտրոնի տարածքն ամբողջությամբ կառուցապատված է: Անմիջապես տարածքի հարևանությամբ անցնում է ավտոճանապարհ, որը միացնում է Նուբարաշեն թաղամասը Խարբերդի հետ: Կենտրոնի տարածքի մերձակայքում գտնվում են Երևանի ՋԷԿ-ը, “Մաքուր երկաթ գործարան” ՓԲԸ-ն, այլ արտադրական և պահեստային շինություններ:

<<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՓԲԸ դիմային մասում առկա են մի քանի տասնյակ ծառեր, որոնք տնկվել և խնամվում են կենտրոնի կողմից: Աշխատանքների ընթացքում ծառերի հատում չի նախատեսվում:

Տեղանքի ռելիեֆը հանգիստ է: Տեղանքի ռելիեֆի թեքությունը արևելքից արևմուտք կազմում է 10մ:

Տեղանքի նիշը ծովի մակերևույթից 927մ է:

Հրազդան գետից տեղանքի հեռավորությունը 18կմ է:

Սեյսմակայնությունը – 8-9 բալ:

Պատմաճարտարապետական «Էրեբունի» թանգարանը գտնվում է տեղանքից ~4կմ հեռավորության վրա:

Նկար 2. Տարածքի իրավիճակային սխեմա

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Գեոմորֆոլոգիա

Ներկայացվող տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով ամուր կազմության, փթաց բույսերի մնացուրդներով և արմատներով:
2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային

լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ, քանի որ ստորգետնյա ջրերը, տեղադրված են մակերեսից 5մ-ից ցածր: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտերում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր>> նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

4.2 Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 °C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 4.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 4.1.Օդի միջին ջերմաստիճանը, °C

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	**12.0**

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 4.2-ում:

Աղյուսակ 4.2. Օդի հարաբերական խոնավությունը, %

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	**60**

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ^2: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Աղյուսակ 4.3. Տեղումների բնութագիրը

Տեղումների քանակը ____միջին_____ , մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
24 21	26 23	32 34	43 29	52 42	27 31	13 29	10 26	13 51	26 35	28 36	22 28	**316** **51**

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ^2:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-"Էրեբունի" մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 4.4-ում:

Աղյուսակ 4.4. Քամու բնութագիրը

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	3 2.0	10 2.1	13 2.2	16 2.8	20 2.6	26 2.3	9 2.7	3 3.4	78
IV	7 3.1	14 2.9	8 2.4	18 3.5	18 3.0	16 3.0	13 4.1	6 3.4	50
VII	17 5.5	31 5.9	3 2.2	9 2.4	16 2.1	13 2.5	7 2.7	4 4.6	40
X	5 2.7	18 2.3	10 1.8	11 2.5	19 2.2	22 2.2	10 2.8	5 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 4.5 – 4.7 աղյուսակներում:

Աղյուսակ 4.5 Արեգակնային ճառագայթում (Երևան)

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ^2												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	**700**

Աղյուսակ 4.6. Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	**2696**

Աղյուսակ 4.7. Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	**39**

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 4.8 – 4.9 աղյուսակներում:

Աղյուսակ 4.8. *Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի*

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա ապահովվածություն		ամենա ցուրտ հինգօրյակի ապահովվածություն		միջինը ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝			միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղությունը ռեկտեմբեր-փետրվար ամիսներին	հունվարին միջին արագությունների նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
							0	8	10						
-21	-19	-19	-17	-3.6	-27	8.3	70 -2.4	140 1.0	159 1.8	78	68	132	60	ՀՎ	2.6

Աղյուսակ 4.9. Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	միջին ամսական առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
0.95	0.99									
32	34	42	33	15.6	45	28	154	51	ՀՎ	2.1

4.3. Օդային ավազան

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայան-ներում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ Էկոմոնիթորինգի 2018 թվականի տեղեկագրի Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները չնայած գտնվում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) տիրույթում, բայց ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են գերազանցումներ, ինչը պայմանավորված է ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման այլ աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնօքսիդի համեմատաբար բարձր կոնցենտրացիաներ դիտվում են առավոտյան՝ 8:00-11:00 ժամանակահատվածներում և երեկոյան՝ 18:00-23:00 ժամանակահատվածներում:

4.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիթորինգի կողմից:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ, որտեղից 2018 թվականին վերցվել է 848 փորձանմուշ:

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը: Գործող մաքրման կայաններում իրականացվում են միայն մեխանիկական մաքրում և կոմունալ-կենցաղային կեղտաջրերն առանց լիարժեք մաքրվելու թափվում են մակերևութային ջրային օբյեկտներ: Ամբողջապես չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ ջրային օբյեկտներ են տանում մեծ քանակությամբ ազոտային և ֆոսֆորային միացություններ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ» կամ «միջակ» որակի է (2-րդ կամ 3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում և Երևանյան լիճը: Աղտոտվածությունը պայմանավորված է $ԹԿՊ_5$, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով, վանադիումով և ընդհանուր անօրգանական ազոտով:

4.5. Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

<<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՓԲԸ տարածքում հողային ծածկույթի ուսումնասիրության և գնահատման նպատակով գործունեության ենթակա տարածքում կկատարվեն հողի կտրվածքներ և յուրաքանչյուր կտրվածքից ըստ խորությունների կվերցվեն հողի նմուշներ:

Հողի կազմի անալիզների համար վերցված նմուշները համարակալված արկղերով կտեղափոխվեն են ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն” ՓԲԸ լաբորատորիա, որտեղ կկատարվեն ուսումնասիրություններ և անալիզներ: Հողի աղտոտվածության ուսումնասիրությունների և անալիզների ցուցանիշների արդյունքները կգրանցվեն հաշվետվություններում:

4.6. Կենսաբազմազանություն

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Նախատեսվող գարծունեությունը իրականացվելու ՍԱՈՌԳՎԳ կենտրոնի տարածքում, Երևանի արդյունաբերական գոտում, որտեղ բացակայում է բնական բուսածածկույթը: Կենտրոնի տարածքում առկա են ծառաշերտեր, որոնք տնկվել և խնամվում են կենտրոնի կողմից:

Գործունեության տարածքում, ասֆալտապատումից և կառուցապատումից ազատ տարածքներում տեղ-տեղ հանդիպող է խոտային ծածկույթում հանդիպող բուսականության տեսակներն են՝

Մատիտեղ /երկու տեսակ, որոնցից մեկի սերմերի պատիճը ուլունքաշար է, մյուսինը՝ փնջով լոբի/, երկտերև, օշինդր, Կապար փշոտ, Իշառվույտ, կովի առվույտ: Այս տարածքում հացազգիներից գերակշռում է կծմախոտը, կա անապատային սեզ:

Ներկայացվող տեղանքին և շրջակա տարածքներին բնորոշ կենդանատեսակներից են, ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևաորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Թռչուններից՝ լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Անմիջապես, <<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՓԲԸ տարածքը և նոր կառույցների համար նախատեսվող տարածքներն արդեն իսկ կառուցապատված են, որտեղ բացակայում է բնական բուսածածկը, տեղ-տեղ հանդիպում է խոտային ծածկույթ և չեն կարող հանդիպել վայրի կենդանիներ:

4.7. Սոցիալ-տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից[1]:

Աղյուսակ 4.10. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3351.2 հա
3	այդ թվում՝վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12

[1] www.armstat.am

5	Բնակչության թվաքանակը	1073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 4.11. Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն՝	41.2
✓ գյուղատնտեսություն՝	1.1
✓ շինարարություն՝	63.7
✓ մանրածախ առևտուր՝	76.4
✓ ծառայություններ՝	81.4

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Աղյուսակ 4.12. Սոցիալական ցուցանիշներ

Սոցիալական ցուցանիշը	***Ընդամենը***	***Կանայք***	***Տղամարդիկ***
Զբաղվածներ, հազ. մարդ	294.3	144.3	160.0
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ.մարդ	168.9	104.4	64.5
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	17076	-	-

Շենգավիթ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին:

Աղյուսակ 4.13. Ազդակիր վարչական շրջանը

Վարչական շրջան	*Տարածքը, հա*	*Բնակչության թվաքանակը 2016 թ. տարեվերջին, հազ.մարդ*
Շենգավիթ	4090	137.4

Շենգավիթ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

5.1. Ռիսկերի գնահատում

Լաբորատոր վարչական շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կարելի է բաժանել երկու մասի՝ վերակառուցման/շինարարության փուլ և շահագործում:

Շինարարության փուլում գործունեության իրականցման ժամանակ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ, իրենց բնույթով կլինեն սահմանափակ, կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Լաբորատոր վարչական շենքի վերակառուցման աշխատանքների ընթացքում,
- Քանդման ենթակա շինության քանդման աշխատանքների ընթացքում
- Նոր կառուցվող մասնաշենքերի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ,
- Հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինհրապարակի տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը, կամ օբյեկտներին պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

5.1.1 Օդի աղտոտում

Գոյություն ունեցող 267ք.մ. մակերեսով շինության քանդման և նոր մասնաշենքերի կառուցման շինարարության ընթացքում հիմնականում

կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի օգտագործման դեպքում:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ժամանակավոր և ենթակա արագ ցրման՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազենելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

5.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակի հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների հեռավորությունը և <<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՓԲԸ տեղադիրքը: Այն գտնվում է Երևան քաղաքի հարավային ծայրամասում, Շենգավիթ վարչական շրջանի արդյունաբերական գոտում, կենտրոնից նվազագույնը 120 մետր հեռավորության վրա գտնվում է Խարբերդի այգեգործական ընկերության առանձին շինություններ, իսկ մոտակա բնակելի՝ “Էրեբունի” և «Նորագավիթ» թաղամասերը գտնվում են Կենտրոնից մոտ 1200-2000մ հեռավորությունների վրա:

Շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ աղմուկի և թրթռումների մակարդակների նվազեցման համար անհրաժեշտ է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ,
- Աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;

5.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Ջրահեռացում

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է Կենտրոնի տարածքում առկա կենցաղային հարմարություններից: Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են գործող ցանցերի միջոցով:

Շինարարության ընթացքում մակերևութային ջրերի որակի վրա որևէ ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում: Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կկատարվի կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով՝ բացառելով շինհրապարակից հնարավոր արտահոսքերը: Ակյդ նպատակի համար տարածքի ցածրադիր մասերում տեղադրվելու է անձրևընդունիչ հորեր, որտեղից տարածքի անձրևաջրերը և շինհրապարակի հոսքաջրերը կազմակերպված ձևով կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

5.1.4. Շինարարական աղբ և թափոններ

Նախատեսվող վերակառուցման/շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են շինարարական և կենցաղային աղբ:

ա. Գոյություն ունեցող շինության քանդման արդյունքում կառաջանա 160 մ3 շինաղբ:

բ. Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող շինաղբի ծավալները գնահատվում են 48 – 54 մ^3:

Կենցաղային աղբի ծավալները կախված են շինանձնակազմի թվաքանակից և աշխատանքների ստույգ տևողությունից: Ըստ նախնական գնահատման կենցաղային աղբի ծավալները կարող են կազմել՝ 64 – 96 մ^3:

5.2. Հիմնական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով *(ԲԿՊ)* նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

5.2.1. Մթնոլորտային օդի պահպանություն

Օդային աազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

5.2.2 Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Շինարարության համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,
- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

5.2.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում, անհրաժեշտության դեպքում ետլիցք, կամ ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով

<u>Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝</u>

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

5.2.4 *Աղմուկ*

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

- Բացառել միաժամանակ մի քանի տեխնիկական և տրանսպորտային միջոցների միաժամանակ շահագործումը:

5.2.5 *Կենսաբազմազանություն*

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Երևան քաղաքի շենգավիթ վարչական շրջանի կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

<u>Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով հարակից տարածքների բնակչությանը և գոյություն ունեցող հանրային օբյեկտներին պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝</u>

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը և հանրային օբյեկտներին իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

5.2.6 *Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝*

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվաում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГОСТ 12.1.046-85.

Վերը թվարկված բնապահպանական միջոցառումները ուղղված են առաջին հերթին աշխատակազմի և մերձակա բնակչության առողջությանը և կենսակերպին չվնասելուն:

Պետք հաշվի առնել, որ շինարարության ժամանակ կպահանջվի աշխատուժ և աշխատատեղերի հիմնական մասը կհամալրվի տեղի բնակչության ներկայացուցիչներով, ինչը թույլ կտա որոշակի ժամանակով ապահովել նրանց ընտանիքների համեմատաբար բարենպաստ կենսամակարդակ:

5.2.7 *Թափոնների և այլ նյութերի կառավարումը*

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա լաբորատոր վարչական շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման աշխատանքների ընթացքում, դա շինարարական աղբն է, որը կառաջանա ինչպես գոյություն ունեցող շինության քանդման աշխատանքների, վարչական շենքի վերակառուցման, այնպես էլ նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների արդյունքում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և շինաղբը մնացորդային գրունտի հետ միասին սահմանված կարգով շինհրապարակից կհեռացվեն արտոնագրված աղբավայրեր: Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված /Աջափնյակ վարչական շրջանի՝ Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր/:

5.2.8 *Աշխատանքի անվտանգություն և առողջություն*

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

6. Շահագործման փուլ

<<Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՓԲԸ շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում պայմանավորված են՝

- Լաբորատոր վարչական շենքի ջեռուցման և տաք ջրամատակարարման համար նախատեսված կաթսայատան աշխատանքից առաջացող արտանետումներով (գազի այրումից առաջացող ազոտի և ածխածնի օքսիդներ);

- Կենտրոնի շահագործման և լաբորատորիայի գործունեության ընթացքում լաբորատոր փորձարկումների համար օգտագործվող նյութերի և փորձարկումների արդյունքում տարբեր տեսակի թափոնների և հոսքաջրերի առաջացումով:

Ներկայումս Կենտրոնի լաբորատորիայի գործունեությունն իրականացվում է միջազգային նորմերին ու կանոններին, ինչպես նաև ազգային օրենսդրական պահանջներին համապատասխան:

Համապատասխան ընթացակարգերի համաձայն լաբորատոր գործունեության արդյունքում առաջացող թափոնների հեռացվում, խոտանվում կամ հանձնվում են կազմակերպությունների, որոնք ունեն համապատասխան արտոնագրեր նշված թափոնների ընդունման համար: Լաբորատոր նմուշների փաթեթավորվումը, հաշվառվումը, օգտագործումը, պահումը և տեղափոխումը իրականացվում է սահմանված ընթացակարգերով: Լաբորատորիայի գործունեության ընթացքում առաջացող տարբեր տեսակի հեղուկ նյութերը, որոնք կարող են առաջանալ լաբորատոր փորձարկումների արդյունքում, լուծույթներով վնասազերծվելուց հետո հեռացվում են կոյուղի:

Լաբորատոր համակարգի մասնագետները միջազգային մոտեցումներին համապատասխան պարբերաբար ուսուցանվում և վերապատրաստվում են լաբորատոր նմուշների փաթեթավորման հաշվառման, տեղափոխման, հանձնման ընթացակարգերի կատարելագործման համար:

7. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման և բարեկարգման,, կանաչապատման և բուսականության վերականգնգման պլան: Կենտրոնի տարածքում կան դեկորատիվ ծառատեսակներ, որոնք շինարարության հետևանքով որևէ վնաս չեն կրի: Նախագծով նախատեսված աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից՝ բարելավելով այն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է՝

- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակա-վոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը և բարեկարգել նոր կառուցապատվող տարածքները
- ամբողջ շին աղբը,նյութերի մնացորդային քանակները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,
- Ծառերի և թփերի վտնկման վայրերը և քանակը համապատասխանեցնել նախագծով նախատաոսված կանաչապատման աշխատանքներին,
- ապահովել տնկված ծառերի և թփերի կպչողականությունը:

- Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

8. Ռիսկերի նվազեցման և մոնիթորինգի պլան

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

9. Հանրային քննարկումներ

Երևան քաղաքի «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ լաբորատոր վարչական

շենքերի վերակառուցման և օժանդակ մասնաշենքերի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել են նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: Հանդիպումը տեղի է ունեցել 2020թ.-ի փետրվարի 28-ին ՓԲԸ գրասենյակում, որին մասնակցել Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները, նախագծային ընկերության ներկայացուցիչները, բնակիչներ:

Հանդիպման տեսաձայնագրությունը, արձանագրությունը և մասնակիցների ցանկը ներկայացվելու են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի գործողու-թյունները	Հնարավոր Ազդեցու-թյունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխան-ատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում Շինարարական հրապարակի բոլոր գործողութ-	Բացասական ազդեցություններ՝ Լաբորատոր վարչական շենքի վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման շինարարության և շահագործման փուլերում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, ԲԿՊ-ի և վարչական շենքի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է	Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը	Հիմնական կապալառու Կապալառու	Շինարարության կապալառու Շինարարության կապալառու

Աշխատողների, ՓԲԸ աշխատակիցների և շինհրապարակի մերձակայքում բնակվող, կամ այգեգործությամբ զբաղվող մարդկանց անվտանգություն	հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան հողանասերի, օբյեկտների և շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:		
.Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ այլ ինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով**;** - Գոյություն ունեցող շինությունների վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման ընթացքում հատուկ արողություններ	Կապալառու	Շինարարության կապալառու

		կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն և չեն առաջացնի կուտակումներ - Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի		
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն վերակառուցման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Վերակառուցման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի	Կապալառու	Շինարարության կապալառու

		թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու - ընթացակարգերը; Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;		
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	- Շինարարական անձնակազմը կօգտվի տարածքում գոյություն ունեցող կոյուղաջրերի հեռացման համակարգերից՝ կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, - Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, բացառելով արտահոսքը շրջակա տարածքներ:	Կապալառու	Շինարարության կապալառու
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:	Կապալառու	Շինարարության կապալառու

		- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;		
Շինհրապարակի Վերականգնում «ՍԱՈՌԳՎԳԿ» ՓԲԸ տարածքի բարեկարգում/ կանա չապատում Շահագործման փուլ	- լաբորատոր փորձարկումների համար օգտագործվող	- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները; - կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների; ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար - հեղուկ նյութերը լուծույթներով վնասազերծվում են, որից հետո նոր հեռացվում են կոյուղի - Ընթացակարգերին համապատասխան լաբորատոր նմուշները փաթեթավորվում և հաշվառվում են -առաջացող թափոնները խոտանվում են, կամ հանձնվում են կազմակերպությունների, որոնք ունեն համապատասխան արտոնագրեր նշված թափոնների ընդունման համար -Լաբորատոր համակարգի մասնագետները միջազգային մոտեցումներին համապատասխան պարբերաբար դասընթացներ են անցնում:	Կապալառու Կապալառո Կենտրոնի տնօրինություն/ Կապալառու Կենտրոնի Տնօրինություն Կենտրոնի տնօրինություն	Շինարարության կապալառու Շինարարության կապալառու Կենտրոնի տնօրինություն

	նյութերի և փորձարկումների արդյունքում տարբեր տեսակի թափոնների և հոսքաջրերի առաջացում			

Բնապահպանական միջոցառումների գումարները պետք է ներառվեն շինարարական աշխատանքների ընդհանուր հաշվեկշռում: Դրանք պետք է ընգրկեն ջրցանի համար օգտագործվող ջրի գինը, տեղեկատվական վահանակների, աղբահավաք միջոցառումների և ստորև բերվող մոնիթորինգի միջողառումների ծախսերը: Ըստ ընդունված պրակտիկայի բբնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծախսերը կազմում են կապիտալ ծախսերի 1.2 – 1.5 տոկոսը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ **ՀԱՎԵԼՎԱԾ 2**

Գործողություն	**Նվազեցնող միջոցառումներ**	**Որտեղ իրականացնել**	**Ինչպես իրականացնել**	**Ժամանակամիջոց**	**(ո՞վ է իրականաց նում մոնիտորինգը)**
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Շինարարության կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Շինարարության կապալառու Երևանի քաղաքապետարան

Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Վերահսկող խորհրդատու /ՎԽ/
Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Շինարարության կապալառու ՎԽ
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Շինհրապարակի զննում	Շինարարաության ընթացքում	Շինարարության կապալառու ՎԽ
Ներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Ներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Շինարարության կապալառու ՎԽ
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - Երևանի քաղաքապետարանի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	ՎԽ Երևանի քաղաքապե-տարանի վերահսկողու-թյուն
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Շինարարության կապալառու ՎԽ
Աշխատանքի անվտան-գություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Շինարարության կապալառու ՎԽ

Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի զննում	Շինարարության ավարտին	ՀՏՀՀ, Դպրոցի տնօրինություն
Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Շահագործման փուլ	Շինարարության կապալառու Կենտրոնի տնօրինություն
Շահագործման փուլ	Շնթացակարգերին համապատասխան լաբորատոր նմուշները և թափոնները հեռացված են, իսկ հեղուկ նյութերը վնասազերծումից հետո են հեռացվում կոյուղի	Լաբորատորիաներում	Մշտադիտարկումների իրականացում, Ստուգայցեր	Շահագործման փուլ	

Հավելված 3. Տարածքի սեփականության վկայական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Մասիսի խճուղի 107/2

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անհատույց օգտագործման պայմանագիր 05.12.2019թ. հ. 15032

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0556-0003
Մակերեսի չափը (հա)՝ 3.81411
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՎԿԱՅԱԿԱՆ N 18122019-01-0276, գաղտնաբառ՝ XLXDAZUXAS2S

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-011-0556-0003-001	վարչական մասնաշենք	1864.9 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	01-011-0556-0003-002	լաբորատորիա	11266 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
3	01-011-0556-0003-004	լաբորատորիա	1383.8 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
4	01-011-0556-0003-005	լաբորատորիա	267 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
5	01-011-0556-0003-007	Պոմպակայան	96.7 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
6	01-011-0556-0003-008	կշեռք	44.4 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
7	01-011-0556-0003-009	Պահակատուն	11.3 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
8	01-011-0556-0003-010	Գալերեա	175 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
9	01-011-0556-0003-003	Պոմպակայան	175.3 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
10	01-011-0556-0003-006	հարթակ	142.8 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
11	01-011-0556-0003-011	պարիսպ	158.56 քմ, 317.12 խ.մ., 792.8 գծամետր	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության ժամկետը ՝ անորոշ: Սույն վկայականը հանդիսանում է N 17122019-01-0318 վկայականի ուղղված տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գրիգոր Վարդանյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 18122019-01-0276, գաղտնաբառ՝ XLXDAZUXAS2S

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Էջ 2/2